ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 1, 91-92

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԵՏՐՈՍԻ ԴԵՄՅՈԽԻՆ
(ծննդյան 115-ամյակին)
(1900 - 1953)

2015թ. լրանում է Հայաստանի երկրաբանական ծառայության ավագ սերնդի նշանավոր գործիչներից մեկի՝ հիդրոերկրաբանության և ինժեներային երկրաբանության ասպարեզներում ճանաչված գիտնական և գիտության հմուտ կազմակերպիչ, ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն (1941-1950թթ.), երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Պետրոսի Դեմյոխինի ծննդյան 115-ամյակը:

Ա.Դեմյոխինը ծնվել է 1900թ. օգոստոսի 19-ին, Սմոլենսկի նահանգի Իզդեշկովո գյուղում: Ավարտելով Մոսկվայի լեռնային ակադեմիան (1930թ.), նա 1931թ. տեղափոխվում է Հայաստան և իր հետագա կյանքն ու գործունեությունը լիովին նվիրաբերում Հայաստանում երկրաբանության, մասնավորապես՝ ջրաերկրաբանության զարգացման գործին:

Հենց առաջին տարիների նրա հետազոտությունները նվիրված էին Արզնու շրջանի հանքային ջրերի ավազանի երկրաբանական կառուցվածքի, հանքային ջրերի ձևավորման, պաշարների, քիմիական բաղադրության, հատկությունների և առանձնահատկությունների բացահայտմանը, ինչպես նաև բուժման նպատակներով դրանց օգտագործման հեռանկարներին: Ա.Դեմյոխինի անվան հետ են կապված «Արզնի» առողջարանի շինարարությունը և միջազգային ճանաչում ստանալու գործընթացները:

Հետագա տարիներին Ա.Դեմյոխինը նույնատիպ լայնածավալ հետազոտություններ իրականացրեց Վայոց Ձորի շրջանի Ջերմուկի հանքային ջրերի ավազանի սահմաններում, որոնց հիմքի վրա կառուցվեց և մինչ այժմ հաջողությամբ գործում է հանրահայտ «Ջերմուկ» առողջարանը: Ա.Դեմյոխինի ղեկավարությամբ կատարված հետազոտությունների արդյունքները բերեցին Հայաստանի Դիլիջան, Հանքավան, Արարատ և մի շարք այլ հանքային ջրերի պաշարների հաստատմանն ու շահագործմանը՝ որպես խմելու հանքային ջրեր: Երկարամյա հիդրոերկրաբանական աշխատանքների արդյունքներն Ա.Դեմյոխինն ամփոփեց «Հայաստանի հանքային ջրերը» առաջին ամփոփագրում, որը մինչ այժմ չի կորցրել իր գիտական արժեքն ու նշանակությունը:

Ա.Դեմյոխինի բազմամյա գործունեությունը չի սահմանափակվել միայն հիդրոերկրաբանական խնդիրներով: Նրա մեծ փորձառությունը և գիտական ինտուիցիան թույլ էին տալիս որոշիչ եզրակացությունների հանգել մի շարք կարևորագույն սեյսմաբանական և ինժեներա-

երկրաբանական խնդիրների վերաբերյալ և առաջարկել գործնական լուծումներ: Իր աշխատություններում նա անդրադարձ է կատարել նաև Հայաստանի ոչ մետաղական օգտակար հանածոների, այդ թվում՝ վառելիքային հումքի ուսումնասիրման և օգտագործման հեռանկարների հարցերին:

Հատուկ հիշատակման է արժանի Ա.Դեմյոխինի դերը բարձրորակ մասնագիտական կադրերի պատրաստման գործում: 1937-1951թթ. նա դասավանդել է ջրաերկրաբանություն և ինժեներային երկրաբանություն առարկաները Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում: Նրա ուսանողներից շատերը հետագայում մեծ ներդրում են ունեցել ինչպես Հայաստանում ջրաերկրաբանական գիտության զարգացման, այնպես էլ բազմաթիվ կիրառական խնդիրներ լուծելու գործում:

Մեծ է եղել Ա.Դեմյոխինի դերը Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի պաշտոնավարման տարիներին (1941-1950թթ.): Նրա ղեկավարած նորաստեղծ գիտական կոլեկտիվի ջանքերով իրականացվում էին այդ տարիներին Հայաստանի գիտության և տնտեսության համար առաջնահերթ երկրաբանական խնդիրներին առնչվող հետազոտություններ և հիմքեր դրվեցին ինստիտուտի գիտական ուղղությունների հետագա զարգացման:

Ա.Դեմյոխինի ջանքերով ինստիտուտում հիմնադրվեց ջրաերկրաբանական բաժին: Արդեն այդ ժամանակ մեծ թափով ծավալվեցին Հայաստանի ջրաերկրաբանությանն առնչվող տարբեր խնդիրների լուծմանն ուղղված հետևողական և նպատակամղված ուսումնասիրություններ: Այդ մոտեցումները որոշիչ դեր խաղացին հանրապետությունում հանքային և քաղցրահամ ջրերի արդյունավետ օգտագործման, ինչպես նաև առողջարանային ցանցի զարգացման գործում գիտականորեն հիմնավորված պետական քաղաքականության մշակման համար:

Անգնահատելի է նաև Ա.Դեմյոխինի վաստակը Հայաստանի մշակույթի և, առաջին հերթին, հնագիտության բնագավառում: Նրա կողմից են հայտնաբերնել Կարմիր Բլուր ուրարտական ամրոցի սեպագիր արձանագրությունը, Արզնի ավանի շրջակայքում պալեոլիթի ժամանակաշրջանի քարե (օբսիդիան) գործիքները և Գեղամա լեռնաշղթայի սահմաններում գոյություն ունեցող ժայռապատկերները:

Ա.Դեմյոխինը բազմաթիվ գիտական աշխատությունների, մասնագիտական պրակտիկ եզրակացությունների և առաջարկների հեղինակ է, որոնցից շատերը չեն կորցրել իրենց գիտական արժեքը:

Ա.Դեմյոխինի ծննդյան 115-ամյակը ևս մեկ առիթ է ինստիտուտի ողջ կոլեկտիվի, երկրաբանական հանրության և նրա հիմնադրած գիտական դպրոցի սաների ու հետևորդների համար՝ խորին երախտագիտությամբ նշելու գիտության նվիրյալի, Հայաստանի երկրաբանության, առողջապահության և հնագիտության ասպարեզներում մեծ ավանդ ներդրած անձնավորության հոբելյանը:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն